Student/Registration Number | | | | | | | | | | | |

Centre Number | | | | | | |

2008 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Thursday 16 October: 2 pm Eastern Standard Time

Reading Time: 10 minutes

Working Time: 2 hours and 50 minutes

- *You have 10 minutes to read all the papers and to familiarise yourself with the requirements of the questions. You MUST NOT write during this time.*
- *Monolingual and/or bilingual printed dictionaries may be consulted during the reading time and also during the examination.*

Section 1: Listening and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 50 minutes for Section 1.
2. Write all your answers to the questions in Section 1 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
6. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

© Board of Studies NSW 2008

Part A

20 marks
Attempt Questions 1–5

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of texts by identifying and analysing information and convey the information accurately and appropriately*

You will hear FIVE texts. Each text will be played twice. There will be a short break between the first and second playings in which you may make notes.

Listen carefully to each text and then answer the questions in ENGLISH.

Marks

You may make notes in this space.

Text 1

1. Complete Hasmik's itinerary. **2**

Duration of Trip – ☐ ***days***

Event	*Date*
Arrival	_____
Sahak's birthday	_____
_____	30 April 2008

Marks

You may make notes in this space.

Text 2

2. (a) Why is the customer having this conversation with the salesperson? **2**

_____

_____

_____

_____

(b) Why is the salesperson successful in making the sale? **4**

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Marks

You may make notes in this space.

Text 3

3. Why is the speaker a good choice for this audience? Support your response with evidence from the text. **5**

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Text 4

4. What is the main point that Aram is trying to make to Sylva? **1**

(A) Sylva does not need a new car. ☐

(B) Sylva's father's business is damaging the environment. ☐

(C) Everyone has the opportunity to make good environmental choices. ☐

(D) Global warming is not a boring issue. ☐

Marks

You may make notes in this space.

Text 5

5. (a) Where is the conversation between Alex and his sister taking place? **1**

(A) At home ☐

(B) At school ☐

(C) At a restaurant ☐

(D) At a soccer match ☐

(b) How would you describe Alex and his relationship with Gayanè? **5**

Part B

10 marks
Attempt Questions 6–7

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of texts by identifying and analysing information*
- *convey the information accurately and appropriately*

You will hear TWO texts, one relating to Question 6 and one relating to Question 7. Each text will be played twice. There will be a short break between the first and second playings in which you may make notes.

Listen carefully to each text and then answer the questions in ARMENIAN.

	Marks	You may make notes in this space.
Text 6		
6. Why is Dr. Vartanian so concerned about youth and alcohol?	**4**	
Երիտասարդության ալկոհոլի սխալ գործածումը ի՞նչու է մտահոգում բժիշկ Վարդանեանին։		

Marks

You may make notes in this space.

Text 7

7. Comment on Manoog's chance of success, based on the interview. **6**

Քու կարծիքովդ Մանուկ ոՐքանով յաջող թեկնածու մըն է՝ առաջարկուած պաշտօնին համար։ Արդարացո՛ւր պատասխանդ հիմնուելով հարցազրոյցին վրայ։

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

End of Section 1

BLANK PAGE

Student/Registration Number | | | | | | | | | | | |

Centre Number | | | | | | |

2008 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 2: Reading and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 1 hour and 15 minutes for Section 2.
2. Write all your answers to the questions in Section 2 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet and on page 9.
6. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

© Board of Studies NSW 2008

Part A

20 marks
Attempt Questions 8–9

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and/or specific aspects of texts, by, for example, comparing, contrasting, summarising, or evaluating, and convey the information accurately and appropriately*

---

8. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

ՏԱՂ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ

Քե՛զ, Հայ Լեզու, կը սիրեմ
մրգաստանի մը նման...
Մեր անցեալին թանձրախիտ
ստուերներուն մէջ՝ կարծես
Մեյ-մէկ պտո՛ւղ քու բոլոր
բառերդ ինծի երեւնան,
Որոնց մէջէն կը քալեմ ու
կը քաղեմ զանոնք ես։

Մրգաստանի մը նման կը սիրեմ
քեզ, Հա՛յ լեզու...
Մեր Հայրենի պարտէզն,
պարտէզներէն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ,
որ դիմացար դարերու
Եւ կը մնաս միշտ առոյգ, հին
աւիշով կենսահորդ։

Ծառերուդ մէջ հովանուտ կ'երթամ
խինդով մանսահման
Արմատներուդ, ճիւղերուդ վրայ
նայելով հիացիկ,
Զարմանալով, թէ ինչպէ՞ս
դուն մնացիր, երբ սաստիկ
Քամին քո շուրջդ փչեց եւ
տապալեց ամէն բան։

Մեյ-մէկ պտուղ գոյնզգոյն՝
ամբողջ բառերդ ահա՛,
Հիւթեղ բառերդ, զոր որքան
հասունցուցիր արեւներ,
Բառերդ, որքան այս պահուս
շրթանցս վրայ եմ բռներ,
Բառե՛րդ, որ քիմքս կ'օծեն
եւ կը սփոփեն սիրտս հիմա...

Question 8 continues on page 3

Marks

Question 8 (continued)

(a) To what does the poet compare the Armenian language? **1**

(b) Explain the emotions expressed by the poet in the third and fourth stanzas. **2**

(c) How do poetic devices and language features contribute to the effectiveness of this text? **4**

End of Question 8

9. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

Սիրելի ընթերցողներ,

Նախորդ շաբթուայ խմբագրականին ի պատասխան ստացանք բազմաթիւ նամակներ։ Այս թիւով կը հրատարակենք անոնցմէ մի քանին։

1

Յարգելի խմբագիր,

Ես երիտասարդ ուսանողուհի մըն եմ ու այս տարի պիտի աւարտեմ համալսարանի իրաւաբանական բաժինը։ Շատ մեծ ծրագիրներ ունիմ դառնալու յաջող եւ պայծառ ապագայի տէր անձ մը։ Ոչինչ կրնայ արգելք դառնալ նպատակներուս իրականացման։
Բարձր կը գնահատեմ այն կանանց որոնք կրցած են որոշ հաւասարակշռութիւն գտնել իրենց տան աշխատանքի ու ասպարէզի բանած ճնշումի միջեւ։ Կը հաւատամ որ որքան մեծ ըլլայ կնոջ մը յաջողութիւնը իր ասպարէզէն ներս այնքան աւելի յարգանքի կ՚արժանանայ իր շրջապատէն եւ ընտանիքէն։
Համաձայն եմ ձեր տեսակէտին՝ որ երկրի կառավարական մարմնի մէջ ունենանք հաւասար թիւով կին եւ տղամարդիկ։ Կին քաղաքականներ աւելի խաղաղ քաղաքականութիւն պիտի վարեն եւ աշխարհի պատերազմներու թիւը պակսեցնեն։
Եկէ՛ք հաւասարութեամբ վարուինք, բնութենէն հաւասար ծնած, այս երկու սեռի ներկայացուցիչներու հետ։

Յարգելի խմբագիր,

2

Կը կարծեմ որ ձեր գրիչը կը վատնէք՝ այսպիսի յօդուածներ հրատարակելով։ Ի՞նչպէս կրնաք շնորհաւորել Տիկ. Խաչատուրեանի խորհրդարանի թեկնածութիւնը։ Արդեօ՞ք հայր չէք եւ կամ ամուսին։ Վստահ եմ որ ձեր պատասխանը այս հարցերուն ոչ պիտի ըլլայ, որովհետեւ հստակ է թէ ընտանեկան մթնոլորտէն անտեղեակ էք։ Տիկ. Խաչատուրեանը պիտի անդրադառնայ թէ իր առած քայլը սխալ էր, երբ իր ընտանիքը խորտակուի իր պաշտօնի պատճառաւ։ Կնոջ դերը իր զաւակներուն եւ ամուսնոյն հոգ տանիլն ու անոնց ամենօրեայ պէտքերը հոգալն է։ Իր երեխաներուն դաստիարակելու սուրբ գործը, ան պէտք չէ փոխանակէ ուրիշ զբաղումներով եւ ինքնասէր կեցուածքով։ Միայն զոհողութեամբ մայր մը արժանի կը դառնայ յարգանքի եւ սիրոյ։ Մայրեր ու ամուսնացած Տիկիններ կարողութիւն չեն ունենար քաղաքական առողջ որոշումներ առնելու եւ լաւ փոփոխութիւններ իրարկելու երկրէն ներս։ Այս մէկը իրականացնելու կարողութիւնը Աստուած տուած է այր մարդոց միայն։ Իմ կարծիքս այն է որ բոլորս պէտք է քաջալերենք կինը, որ ան մնայ տունէն ներս եւ լիովին կատարէ իրեն տնտեսական պարտականութիւնները։ Նաեւ կարեւոր է որ իր դուստրին տրվեցնէ դառնալ պարտաճանաչ ու հնազանդ օրիորդ, պատրաստ ծառայելու իրեն ընտանիքին։ Իսկ դուք պէտք է ամչնաք ձեր ցուցաբերած անմիտ մօտեցումէն։

Question 9 continues on page 5

Question 9 (continued)

3

Հարգելի խմբագիր,

Մեծ հետաքրքրությամբ կարդացի վերջերս ձեր թերթում կատարած ձեր մի քանի դիտողությունները: Բայց ձեր առաջարկը, թե մենք պետք է փոխենք պառլամենտում ընտրություններ կատարելու ձևը, իմ կարծիքով, անհեռատես է:

Վերջերս մի նման վիճելի հարցի քննարկում տեղի ունեցավ մեր տանը:

Ես եվ կինս աշխատում ենք նույն ընդգրաառում: Մեր երրորդ զավակի ծնվելուց հետոյ, ես զգացի, որ կինս այլևս չի կարող համատեղել տան հոգսը եւ աշխատանքը: Ես կնոջս խորհուրդ տվեցի դուրս գալ աշխատանքից եւ մնալ տանը՝ երեխաների հետ:

Բոլորի համար էլ ակնհայտ էր, որ նրա կարիքը տանը ավելի էր զգացվում: Սկզբում նա չէր համաձայնվում, (բոլորն են ասում, որ նա շատ հմուտ է իր աշխատանքում): Նա նույնիսկ առաջարկեց այլ տարբերակներ: Բայց երբ ես բացատրեցի նրա տանը մնալու բոլոր առավելությունները, նա ի վերջոյ տեղի տվեց:

Շատ ամուսինների նման, ես էլ, օգնում եմ կնոջս տնային գործերի մէջ: Բայց ողջամտորեն չի կարելի ակընկալել, որ նա կարողանայ կնոջ նման հմուտ լինել տնային գործերի մէջ: Ես հավատում եմ կնոջ կանացիությանը: Կինը պետք է մնայ տանը , զբաղվի զուտ կանացի գործերով: Իհարկէ, հաճելի երեւույթ է կանայց հետ աշխատելը: Բայց հենց որ կինը ամուսնանում է, ապա նա պետք է ընությունից իրեն տրված հրաշալի տաղանդը այլ տեղ օգտագործի՝ տանը իր ընտանիքի համար:

Question 9 continues on page 6

Marks

Question 9 (continued)

(a) What has prompted these letters to the Editor? **3**

_____

_____

_____

_____

_____

_____

(b) Outline the female law student's argument in Letter 1. **4**

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Question 9 continues on page 7

Marks

Question 9 (continued)

(c) How does the language used in Letter 2 and Letter 3 reflect the views of the writers? **6**

End of Question 9

Part B

10 marks
Attempt Question 10

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of a text by identifying, analysing, and responding to information*
- *convey information coherently (structure, sequence, accuracy and variety of vocabulary and sentence structure) and appropriately (relevance, use of conventions of the text type)*

---

10. Read the text and then answer in 150–200 words in ARMENIAN the question that follows.

> *Ի՞նչպէս սկսիմ զգացումներս արտայայտելու ու ի՞նչ բառեր ճարեմ զղջանքս բացայայտելու։*
>
> *Պատահածը խրովութիւն պատճառեց իմ եւ Ատիսին միջեւ։ Ես կը խոստովանիմ որ սխալեցայ, երբ առաջարկեցի մեր գրավոր աշխատանքը ընդօրինակել* internet- *էն։ Նախապէս, մեր տեղեկագրին մէջ հետաքրքրական տեղեկութիւններ ներառելու նպատակն ունէի, սակայն երբ անձնական հարցերուս զբաղեցայ ու ժամավաճառ դարձայ՝ որոշեցի տեղեկագիրը ընդօրինակել նոյն աղբիւրէն։ Կարծեցի որ ուսուցիչս պիտի չկարենար անդրադառնալ որ մեր յանձնածը ընդօրինակութիւն մըն էր եւ չի յուսացի որ այսքան խիստ պատիժ մը պիտի սահմանէր մեզի համար։*
>
> *Հիմա Ատիսը հետս չի խօսիր... կ՚ուզեմ ուսուցիչս ներողամտութիւնը խնդրել, սակայն ի՞նչքան լաւ պիտի ըլլար եթէ Ատիսը ինձի ընկերանար։*
>
> *Արդեօ՞ք կրնամ յաջողիմ Ատիսին համոզելու, որպէսզի միասին լուծենք այս հարցը*

Imagine you are Arpy. The day after you write this diary entry you have a conversation with Addis on the internet. Write the text of the conversation.

Երեւակայէ՛ որ դուն Արփին ես եւ այս օրագրի գրութեան յաջորդ օրը Ատիսին հետ պիտի զրուցես ինտերնետ—ի վրայ։ Գրէ՛ զրոյցին ընագիրը։

You may make notes in this space.

Do not remove this page from the question booklet.

Student/Registration Number											

Armenian Continuers Level

Centre Number						

Question 10

End of Section 2

BLANK PAGE

BLANK PAGE

Student/Registration Number | | | | | | | | | | | |

Centre Number | | | | | | |

2008 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 3: Writing in Armenian (15 marks)

Instructions to Students

1. Allow approximately 45 minutes for Section 3.
2. Write your answer to a question from Section 3 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ONE question in ARMENIAN.
4. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
5. All question booklets will be collected at the end of the examination.

This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).

© Board of Studies NSW 2008

Total marks – 15
Attempt ONE question from Questions 11–12

When judging performance in this section, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates:

- *relevance and depth of treatment of ideas, information, or opinions*
- *accuracy and range of vocabulary and sentence structures*
- *the capacity to structure and sequence response and capacity to use conventions of the text type*

Answer ONE question from this section in 200–250 words in ARMENIAN.

11. Write a letter to a friend in Armenia in which you express your hopes and fears about entering the world of work when you have completed your studies.

Գրիր՝ մի նամակ Հայաստանում բնակվող ընկերոջդ, որտեղ արտահայտում ես քո հույսերն ու անհանգստությունները՝ ուսումդ ավարտելուց հետոյ աշխատանքի բնագավառ մտնելու առիթով։

12. As part of its launch, the youth magazine 'Armenian youth life – Australia' has chosen you as the first guest editor. Write an editorial for the first issue of this magazine.

Ավստրալիայում առաջին անգամ հրատարակվում է «Հայ երիտասարդության կեանքը Ավստրալիայում» ամսագիրը։ Որոշվել է առաջին երեք համարների համար երեք խմբագիրներ հրավիրել՝ գրելու խմբագրականները։ Քեզ ընտրել են որպես առաջին խմբագիր։ Գրի՛ր մի խմբագրական առաջին համարի համար։

You may make notes in this space.

Question Number:

End of Section 3

BLANK PAGE

BLANK PAGE

BLANK PAGE

2008 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 1: Listening and Responding

Transcript

© Board of Studies NSW 2008

Section 1, Part A

Text 1

Սահակ- *Այո՛, բարեվ Համիկ, ինչպե՞ս ես, տոմսերդ արդեն վերցրե՞լ ես։*

Համիկ- *Բարեվ Սահակ, այո տոմսս արդեն վերցրել եմ, ապրիլի 23-ին Սիդնեյում կլինեմ։*

Սահակ- *Համիկ, այնքան տեղեր պիտի տանեմ քեզ։ Ձես պատկերացնի 14 օրդ ինչքան կարճ պիտի թվա։*

Համիկ- *Իսկ ուր՞ ես մտադիր ինձ տանել։*

Սահակ- *Եթե հիշու՞մ ես ապրիլի 29-ին իմ ծննդեան օրն է։ Այդ օրը գնալու ենք Սիդնեյի ամենաբարձր աշտարակը , այնտեղից էլ կտեսնես մեր քաղաքի համայնապատկերը։*

Համիկ- *Իսկ օպերա գնալու ենք։*

Սահակ- *տարեդարձիս հաջորդ օրը քեզ նավով պտույտի կտանեմ ու ծովից կտեսնես այդ գեղեցիկ շինությունը։*

Համիկ- *Շնորհակալութիւն Սահակ, ցտեսություն։*

Text 2

Տիկին— Ներեցեք, կարո՞ղ եք ինձ օգնել: Ես եղել եմ Երևանի բոլոր գրախանութներում, բայց չեմ կարողացել նվեր գտնել տղայիս համար: Դուք եք վերջին հույսս:

Գրավաճառ— Իսկ ձեր տղան ի՞նչ գրքեր է սիրում կարդալ:-

Տիկին— Ցավոք սրտի նա ընդհանրապես գիրք չի կարդում:

Գրավաճառ— Իսկ քանի՞ տարեկան է ձեր տղան:

Տիկին— Անհարմար է ասել, բայց նա 18 տարեկան է:

Գրավաճառ— Գիտե՞ք, ես սիրում եմ դժվար խնդիրներ լուծել: Դուք այս գիրքը տեսե՞լ եք:

Տիկին— Ոչ, ինչի՞ մասին է այն:

Գրավաճառ— Սա բացարձակ նորույթ է գրական աշխարհում: Գիրքը կոչվում է «Հարյուր խորհուրդ տղամարդկանց, կեանքում հաջողակ լինելու համար»:

Տիկին— Հետաքրքիր է: Իսկ ինչով է այն տարբերվում մինչեվ հիմայ եղած գրքերից:

Գրավաճառ— Մինչեվ հիմայ եղածները բոլորը խորհուրդներ են կանանց համար:

Տիկին— Այո, կարծեք դա այդպես է:

Գրավաճառ— Ես համոզված եմ, որ ձեր 18 տարեկան տղային շատ օգտակար կլինի ծանօթանալ այդ խորհուրդներին: Ես ինքս քսան տարեկան եմ, հավատացեք ամեն օր դրանք նորից ու նորից եմ կարդում: Վստահ եմ ձեր տղան էլ այդպես կանի:

Տիկին— Լաւ, համոզեցիք:

Text 3

Բարեւ ձեզ սիրելի աւարտական դասարանի աշակերտներ՝

Տեղեակ եմ որ կը մօտենան ձեր քննութիւնները եւ այսօր եկած եմ ձեզ քաջալերելու եւ խորհուրդներ տալու։
Ձեզմէ ոմանք կը ճանչնան զիս։ Ես բազմակիթիւ անգամներ համաշխարհային թէնիսի մրցոյթներուն մասնակցած եմ ներկայացնելով՝ Հայաստանը։ Այսօր կ'ուզեմ խօսիլ թէնիսի մարզէն սորվածներուս մասին ու յոսով եմ որ ձեր լսածները որոշ չափով օգտագործէք ձեր ամէնօրեայ կեանքէն ներս.—

Առաջին՝ կեանքի մէջ մեր կատարած ընտրութիւնները կարեւոր են։ Օրինակ՝ թէնիսի ռակեթի (racquet) *լաւ տեսակը ընտրելը անհրաժեշտ է մարզիկի համար։ Նոյնպէս մասնագիտութեան ճիւղի մը ընտրութիւնը կարեւոր է ձեզ համար։*

Երկրորդ՝ մարդու նկարագիրն է որ կը մնայ բոլորին յիշողութեան մէջ։ Թէնիսի ախոյեաններ յիշատակելի կը դառնան իրենց կիրթ ու վայել վերաբերմունքով ։ Ուրեմն դուք կրնաք դառնալ յաջող եւ յիշատակելի, երբ կեանքի բոլոր ծիրերէն ներս ցուցաբերէք դրական ու համեստ գործընթացք։

Վերջապէս, երբէ՛ք չի յուսահատիք եւ երբէ՛ք չի յանձնուիք տկարութեան։

Թէնիսի դաշտին վրայ մարզիկը կը յաղթահարէ ո՛չ միայն իրեն մրցակիցը, այլ նաեւ ժողովուրդի ցուցաբերած անարդար վերաբերմունքը եւ իրաւարարին սխալ դատողումները։ դժուրութիւններու պարագային, խորունկ շունչ առէ՛ք եւ ինքնավստահութեամբ յառաջացէ՛ք։

Text 4

Սիլվա— *Գիտես ի՞նչ Արամ։ Որոշեցի նոր ինքնաշարժ գնել։*

Արամ— *Սիլվա ես չէի յուսար որ այսքան անձնասէր կ'ըլլաս։ Ամէն մարդ մտահոգուած է երկրագունդի մթնոլորտի ջերմացման հարցով եւ դուն մտադրած ես ինքնաշարժ գնե՞լ։ Ի՞նչու չես կրնար քաղաքի հանրային փոխադրամիջոցները գործածել։*

Սիլվա— *Ես կ'ապրիմ քաղաքի արեւմտեան շրջանը եւ կ'աշխատիմ քաղաքին հիւսիսային մասը։ Ի՞նչպէս կ՞ակնկալես գործի երթամ ամէն օր։ Երկու տարի դրամ չատցուցի, որ ինքնաշարժ գնեմ եւ դուն այսօր խիղճս արթնցնելու ջանքեր կը թափես։*

Արամ— *Շատ մը անձեր որոշումներ կ'առնեն առանց մտածելու։ Այսպիսի երկրի մը մէջ, ուր ընտրութիւններ եւ ընտրելու կարողութիւններ կան, լաւ պէտք է մտածել։ Թերեւս ինքնշարժիդ մասին իրաւունքիդ մէջ ես, բայց ի՞նչ պէտք է ըսել հօրդ գործարանին արտադրուած սեւ ծուխին մասին։ Մարդիկ պէտք է անդրադառնան թէ իրենց արարքները հետեւանքներ ունին։*

Սիլվա— *Խնդրեմ բարեկամ, մի՛ փորձեր երկրագունդի պահապան հրեշտակը դառնալ։ Իսկապէս ձանձրացուցիչ ես։*

Արամ— *Սիլվա շատ լուրջ չես մօտենար այս հարցին։ Երկրագունդի մթնոլորտի ջերմութեան բարձրանալը ձանձրացուցիչ նիւթ մը ըլլալէ շատ աւելի է։ Հարցը լուրջ է բոլորիս եւ նամանաւանդ երիտասարդներուս համար։ Լուռ պէտք չէ մնալ։*

Text 5

Ալեքս— *Ողջույն քույրիկ, ուրախ եմ, որ տանը գտայ քեզ: Կարո՞ղ ես հաւատալ, որ ֆուտբոլի խաղի տոմս ունեմ:*

Քույր— *Օհ՜ Ալեքս: Ո՞ր օրւայ համար:*

Ալեքս— *Վաղւայ: Գասպարի հետ եմ գնալու:*

Քույր— *Բայց ապասի՛ր: Վա՞ղը: Վաղը շաբաթ է եւ դու միշտ շաբաթ օրերը Գայանեի հետ ես անցկացնում:*

Ալեքս— *Այո՛, գիտեմ: Բայց ցաւոք սրտի նա ֆուտբոլ բոլորովին չի սիրում: Վաղւայ մեր հանդիպումը ես չեղեալ կհամարեմ: Նա ինձ կհասկանայ:*

Քույր— *Այդպե՞ս ես կարծում: Ես հաստատ գիտեմ եմ որ Գայանէն շատ պիտի նեղանայ:*

Ալեքս— *Գայանեն ինձ սիրում է: Եւ նա ինձ միշտ հասկանում է:*

Քույր— *Գայանեն շատ ուշագրաւ աղջիկ է եւ եթէ դու արթուն չլինես…*

Ալեքս— *Ի՞նչ նկատի ունես:*

Քույր— *Նրան կարող է բոլորովին դուր չգայ ֆուտբոլի խաղով փոխարինուած լինելը:*

Ալեքս— *Ը՜ը, այդպե՞ս ես կարծում: Երեւի ճիշտ ես: Բոլորն էլ ասում են, որ նա դպրոցի ամենագեղեցիկ աղջիկն է: Գիտե՞ս, երեւի ապահովութեան համար ես նրան կառաջարկեմ մեզ հետ ֆուտբոլի խաղի գալ:*

Քույր— *Երեք հոգով հանդիպելը ժամադպութիւն չի: Բացի դրանից, կարծու՞մ ես կկարողանաս մի տոմս եւս ձեռք բերել:*

Ալեքս— *Դարձեալ ճիշտ ես: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ անեմ: Ես գիտեմ ինչ կանեմ: Գայանեին կառաջարկեմ ինձ հետ ֆուտբոլի խաղին գալ: Հաւանաբար բախտս բերի և նա չուզենայ գալ:*

Section 1, Part B

Text 6

Հաղորդավար—	*Այսօր մեր ռադիոժամի հիւրն է անուանի բժիշկ դոքտոր. Վարդանեանը: Յարգելի բժիշկ Ինչի՞մասին եք՞ խոսելու այսօր:*
Պ:ն Վարդանեան—	*Այսօր իմ զրոյցի թեման է «Երիտասարդութիւնը եւ ալկոհոլը :*
Հաղորդավար—	*Շատ հետաքրքիր եւ արդիական թեմա է:*
Պ-ն Վարդանեան—	*Այո՛, ցաւոք սրտի երիտասարդութիւնը ալկոհոլ սկսում է օգտագործել հավաքոյթների ժամանակ: խմած վիճակում վարում են մեքենան առանց մտածելու հետեւանքների մասին: Նրանք հաճախ վթարի են ենթարկում մեքենան: Անտեղի մարդկային կեանքեր են կորչում:*
Հարորդավար—	*Ի՞նչ խորհուրդ կտաիք նման երիտասարդներին:*
Պ-ն Վարդանեան—	*Երբ ալկոհոլ եք խմել օգտուեցեք երթեւեկութեան այլ միջոցներից:*
Հաղորդավար—	*Ուրիշ ի՞նչ վատաեր կան ձեր մօտ:*
Պ-ն Վարդանեան—	*Երիտասարդները հաճախ չեն կարողանում չափաւոր օգտագործել ալկոհոլը եւ ի վերջոյ դառնում են ալկոհոլիկ:*
Հաղորդավար—	*Ուրեմն ալկոհոլն էլ կարո՞ղ է մոլուցք դառնալ ինչպես թմրանիւթը:*
Պ'ն Վարդանեան—	*Այո: հաճախ ալկոհոլի հետ միասին երիտասարդներ օգտագործում են թմրանիւթեր եվ դրանց համատեղ գործածումը շատ վատ հետեւանքներ է ունենում:*
Հաղորդավար —	*Շնորհակալութիւն ձեր հետաքրքիր զրոյցի համար:*

Text 7

Տիկ. Պետրոսեան— *Բարեւ Մանուկ։ Հրամէ նստիր։*

Մանուկ— *Շնորհակալութիւն*

Տիկ. Պետրոսեան— *Անունս Լուսին Պետրոսեան է։ Ինչպէս գիտես մեր փնտռած աշխատաւորը պէտք է ըլլայ երիտասարդ շրջանաւարտ մը, որ կը տիրանայ* Business- *ի վկայականին։ Անձը պէտք է ունենայ հաղորդակցութեան կարողութիւն, ըլլայ եռանդուն եւ աշխոյժ ու կարենայ աշխատակցիլ ուրիշներու հետ։ Նոր աշխատաւորին պարտականութիւնը պիտի ըլլայ՝ Սիանիի Հայ* Business- *ներու կարիքները ընդառնել եւ անոնց գոհացում տալ։*

Մանուկ— *Շատ բարի։*

Տիկ. Պետրոսեա— *Ուրեմն, խօսէ՛ ստացած ուսումիդ մասին։*

Մանուկ— *Ես տակաւին կ՚ուսանիմ Համալսարանի* Business- *ի հիմնարկին մէջ։ Քանի մը ամիսէն պիտի աւարտեմ ։ Շատ նուիրուած եւ ժրաջան ուսանող մը եղած եմ։*

Տիկ. Պետրոսեան— *Որեւէ գործնական փորձառութիւն ձեռք ձգա՞ծ ես* Business- *ի աշխարհէն ներս։*

Մանուկ- *Այո՛, աշխատած եմ տարբեր տեղեր։ Հօրս ունեցած նպարավաճառի խանութին մէջ։ Նաեւ համալսարանական եղած շրջանիս փորձարութիւն ստանալու նպատակաւ վեց ամիս աշխատած եմ Աւստրալիոյ լաւագոյն հաշուապահական ընկերութիւններէն մէկուն մէջ։*

Տիկ. Պետրոսեան- *մասնակցա՞ծ ես գաղութային աշխատանքներու։*

Մանուկ- *Յաճախած եմ շաբաթօրեայ դպրոց եւ ունիմ ընդարձակ հայկական շրջանակ։*

Տիկ. Պետրոսեան- *կապեր ունեցած ես հայ* business–*ներու հետ։*

Մանուկ- *Ո՛չ։ Սակայն վստահ եմ որ այս աշխատանքը ինձ առիթը կու տայ այդ կապերը հաստատելու։*

Տիկ. Պետրոսեան- *Շատ բարի Մանուկ։ Քանի մը օրէն կը կապուինք հետդ, մեր վերջնական որոշումը յայտնելու։*

Մանուկ- *Շնորհակալութիւն։ Համոզուած եմ որ ձեր պատասխանը դրական պիտի ըլլայ։*